ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1965 Общественные науки

Ա. Ա. Քալանթարյան

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԱՆՈԹ ԴՎԻՆԻՑ

Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի պեղումները տվել են տարբեր կիրառություն ունեցող բազմապիսի իրեր և առարկաներ։

Պատրաստման տեխնիկայի, կիրառության և իր օրնամենտացիայի ձևերով, ուշագրավ է 1961 թ. Դվին քաղաքամեջի միջնաբերդում՝ պալատական դահլիճի շրջանում պեղումների ժամանակ գտնված կավե փոքրիկ սրվակը, որի փոքր-ասիական, բյուզանդական ծագումը ոչ մի կասկած չի հարուցում։

Սրվակը[1] (ՊՊԹ 2197/301) հետաքրքրական է նրանով, որ առաջին անգամ է հայտնաբերվում Սովետական Միության հնավայրերում և նրանց ծագման ու կիրառության վերաբերյալ հայրենական հնագիտական դրականության մեջ չկա ոչ մի ուսումնասիրություն։

Դվինում գտնված պաշտամունքային սրվակը (նկ. 1) սերում է Զմյուռնիայից կամ նրան հարևան մարզերից[2]։ Անոթը ձվաձև է, կարճ վզիկով, քիչ ուռուցիկ, վերին մասում՝ ուսերին ունի երկու անցք թելով կախելու համար։

Նկ. 1.

Ինչպես համանման անոթները, այնպես էլ Դվինի նմուշը կերտվել է կաղապարի օգնությամբ, նախապես առանձին-առանձին պատրաստվել են երկու կողմերը, ապա դրանք միացվել են իրար, այնուհետև արվել է վզիկը։

---

[1] *Հնագիտական գրականության մեջ այդ տիպի անոթները օգտագործվել են «ամպուլա» ձևով։*

[2] Michon Etienne. Nouvelles ampoules a eulogies, Extr. de Memoires de la société nationale des Antiquaires de France. t. LVIII, Paris, 1899.

Dictionnaire d'archéologie chretienne de liturgie, publié par le R. P. done F. Cabrol, Paris, 1904, էջ 454.

Սրվակի վրա երկու կողմից պատկերված է առաքյալ սուրբ Անդրեասի ռելեֆ կիսանդրին, որը հաստատվում է հունական արձանագրությամբ։ Անոթի մի երեսին գրված է. ὁ ἅγιος [᾽Αν]δρέας (Նկ. 2 b) (սուրբ Անդրեաս)։

ա բ

Նկ. 2.

Մյուս երեսին՝ ἀπόστολος (Նկ. 2 a) (առաքյալ)։

Կիսանդրին վերարտադրված է դիմացից։ Անդրեասը պատկերված է մորուքավոր, ծալքավոր պարեգոտով (տունիկա), ձեռքերի մեջ՝ կրծքի առջև պահած մեծ գրքով։ Անոթի երկու կողմերի պատկերները լինելով միևնույն մարդունը, միաժամանակ տարբերվում են դիմագծերով և որոշ մանրամասներով։ Դա բացատրվում է նրանով, որ անոթի երկու կողմերը հանվել են տարբեր կաղապարներով։ Բացի դրանից մի կողմում ձեռքերը միացված են, իսկ մյուս կողմում՝ դրված են միմյանց վրա.

Առաքյալների պատկերների վերարտադրությունը պաշտամունքային անոթների վրա 5—6-րդ դդ. լայն տարածում էր ստացել Բյուզանդական կայսրության սահմաններում, որը պայմանավորված էր պատկերահարգությամբ։

Լուվրում և բրիտանական թանգարանի հավաքածուներում կան շատ օրինակներ առաքյալների պատկերներով։ Անոթների այս խումբը արտադրվել է խոշոր վանքերում, ավելի ճիշտ նրանց կից արհեստանոցներում կամ հոգևորականության պատվերով։ Պատկերների բազմազանությունը բացատրվում է տարբեր սրբերի անունով շատ սրբավայրերի առկայությամբ։

Անդրեասը, ինչպես հայտնի է, իր ուրույն տեղն ուներ առաքյալների շարքերում և իր տարածվածությամբ ետ չէր մնում Պողոսից և Պետրոսից։

Նա ըստ Մատթեոսի ավետարանի, Պետրոսի եղբայրն էր և Հովհաննես Մկրտչի աշակերտը։ Ավանդաբար նրա նշխարները տեղափոխվել էին Կոստանդնուպոլսի Առաքելոց եկեղեցին սուրբ Ղուկասի նշխարների հետ միասին։

Անոթների վրայի պատկերները կկորցնեին իրենց իմաստը, եթե չկարողանայինք ըմբռնել նրանց նշանակությունը և կիրառությունը։

Գրավոր վկայություններ կան այն մասին, որ Պաղեստինի և Սիրիայի վանքերում «օրհնած» ջուր էին բաժանում հավատացյալներին, ուխտավորներին[3]։ Հեռավոր վկայություն կա Մովսես Կաղանկատվացու մոտ, որ սուրբ Զաքարեի և երանելի Պանդալեոնի նշխարները պահվել են ապակե շշերի մեջ[4]։

---

[3] Путник Антонина из Плаценции конца VI века: издал, перевел и объяснил И. Помяловский. Православный Палестинский сборник, том XIII, вып. 3. СПб., 1895.

[4] Մովսիսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 49, 65 և 88։

Պաշտամունքային անոթների մեջ լցվել է «սրբազան ջուր» կամ ձեթ այն ճրագներից, որոնք վառվել են ի պատիվ այս կամ այն սրբերի։

Ուխտավորները սրվակները տարել են իրենց երկրները, նրանց պարունակությանը վերագրելով բուժիչ հատկություններ։ Սովորություն է եղել բերված սրվակները նվիրել ծանոթներին կամ պատվավոր անձնավորություններին։

Դվինում հայտնաբերված սրվակը կարող էր նույն ձևով հայտնվել Հայաստանում։ Հնարավոր է, որ պաշտամունքային անոթը, ինչ որ ձևով արձագանքում է 5—7-րդ դդ. Հայաստանում բյուզանդական և հայկական եկեղեցիների միջև մղվող պայքարին՝ կապված լինելով քաղկեդոնության հետ։

Պաշտամունքային անոթները ունենալով ոճական նույն ընդհանրությունը, տարբերվում են նյութով։ Նրանք պատրաստվել են մետաղից, ապակուց և կավից։ Կավե սրվակներից շատ տարածված են եղել սուրբ Մենասի պատկերով անոթները, որոնք արտադրվել են Եգիպտոսում[5]։

Դվինի սրվակին հար և նման պաշտամունքային անոթները գտնվել են Փոքր Ասիայի արևմտյան մարզերից[6]։ Անդրեաս Առաքյալի պատկերով սրվակները շատ հազվադեպ են և պահպանվում են Լուվրում։ Այդ հավաքածուում սրվակներից մեկը պատրաստվել է նույն կաղապարներով, ինչ որ Դվինի օրինակը և կրում է նույն արձանագրությունը։

Ամենայն հավանականությամբ Փոքր Ասիայի հարավ-արևմտյան մարզերից մեկում գտնվել է ինչ որ ուխտատեղ՝ նվիրված սուրբ Անդրեասին, որտեղ և արտադրվել են այդ սրվակները և տարածվել Բյուզանդիայում և նրա հարևան երկրներում։ Դվինի անոթի հնագիտական արժեքը կայանում է նրանում, որ նա գտնվել է շերտից և ստույգ կերպով թվագրում է իր հետ դուրս եկած առարկաները։

А. А. Калантарян

КУЛЬТОВЫЙ СОСУД ИЗ РАСКОПОК ГОР. ДВИНА

Резюме

Ампула с изображением апостола св. Андрея была найдена при раскопках цитадели города Двина в 1961 году. Она представляет собой небольшой овальный, плоский глиняный сосудик с короткой шейкой и срезанным венчиком. Сосуд изготовлен в двухстворчатой форме. На обеих сторонах тулова изображены человеческие бюсты анфас (св. Андрей с накинутой туникой, держащего в скрещенных руках шкатулку). Фигура сопровождается греческими надписями. Ампула впервые происходит из раскопок определенного слоя (V—VI вв.). Подобные ампулы известны из различных районов Византии и Египта и относятся к культовым предметам ранне-христианского периода.

5 Սուրբ Մենասը եղել է քրիստոնեական Եգիպտոսի հովանավորողը։

6 Wulf Oskar, Altchristliche und Mittelalterliche Byzantinische und Italienische Bildwerke, Berlin, 1909, տեքստը էջ 264—265, պատկեր I XVII.